

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԵՆՈՔՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԻ

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Ս. Միքայելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Է. Մ. Ղազարյան**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Է. Ի. Այվազյան**

Առաջատար կազմակերպություն՝

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. սեպտեմբերի 25-ին ժամը 12⁰⁰-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. օգոստոսի 13-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Թ. Յու. Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Անցյալ դարի վերջերին մեր նորանկախ երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները իրենց ազդեցությունն ունեցան հասարակության, նրա տարբեր շերտերի, առանձին անհատների արժեքային կողմնորոշումների և արժեհամակարգերի վրա: Այս պայմաններում հրատապ էր դառնում կրթական նոր քաղաքականության կիրառման, կրթության բովանդակության մեջ արժեքների լիարժեք ներառման, ավտորիտար համակարգերին հատուկ՝ գիտելիքի տիրապետմանն ուղղված ուսուցումը արժեքների ձևավորմանը միտված կրթությամբ լրացնելու խնդիրը:

Արժեքների շարքում կարևոր տեղ են զբաղեղնում բարոյական արժեքները, որոնք ընկած են անձնային և հասարակական փոխհարաբերությունների հիմքում: Բարոյական արժեքների ձևավորման և, ընդհանրապես, բարոյական դաստիարակության հիմնահարցը տարբեր ժամանակներում գտնվել է փիլիսոփաների, մանկավարժների, կրթության կազմակերպմամբ զբաղվող գործիչների ուշադրության կենտրոնում: Մի շարք փիլիսոփաներ՝ Սոկրատեսը, Արիստոտելը, Օգոստինոս Երանելին, Թ. Աքվինացին, Թ. Մորը, Սպինոզան, Ի. Կանտը, Լ. Ֆոյերբախը և ուրիշներ, բարոյական դաստիարակությանը նվիրված հարցերը քննարկել են իրենց փիլիսոփայական, բարոյագիտական աշխատություններում: Քննարկվող խնդրին հատուկ ուշադրություն են դարձրել անվանի մանկավարժներ Յան Ամոս Կոմենսկին, Զ. Լոքը, Հ. Պետսալոցցին, Ի. Հերբարտը, Կ. Ուշինսկին, Ա. Մակարենկոն և այլք: Այս շարքում տեղ են զբաղեցնում նաև հայ մանկավարժներ Անանիա Շիրակացին, Գրիգոր Մազիստրոսը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Պաղտասար Դպիրը, Ի. Աբովյանը, Ս. Մանդինյանը, Ռ. Պերպերյանը, Հ. Հինդյանը Հ. Քարամյանը Ա. Բալյանը, Յու. Ամիրջանյանը և ուրիշները:

Ներկա շրջանում հանրակրթությունում սովորողների բարոյական արժեքների ձևավորման, բարոյական դաստիարակության հարցերը իրենց հետազոտություններում են ընդգրկել Զ. Վեստ-Բուրնհեմը, Վ. Բալակրիշնան, Ն. Սուդակովը, Ի. Մոսկալենկոն, Ա. Ոյաբչևսկայան, Յա. Յակուբսոնը, Ռ. Փիթերսը, Մ. Մանուկյանը, Լ. Ասատրյանը, Ա. Թոփուզյանը, Հ. Միքայելյանը և այլք: Կան նաև կազմակերպություններ (RAK, ETHIKA և այլն), որոնց հիմնական առաքելությունն է օժանդակել հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ նրանց տրամադրելով բարոյական արժեքների ձևավորմանը նպաստող նյութեր:

Սակայն այս ուղղությամբ կատարվող հետազոտությունների մեծ մասը կիրառելի է միայն «Բարոյագիտություն» կամ «Բարոյական կրթություն» ուսումնական առարկաների դասավանդման գործընթացում, ինչն

իրականացվում է մի շարք երկրներում: Մեր երկրի հանրակրթական դպրոցներում բարոյագիտության վերաբերյալ որոշ նյութեր առկա են 8-րդ դասարանի «Հասարակագիտություն» ուսումնական առարկայի առանձին բաժնում և 10-րդ դասարանի «Բարոյագիտություն» ընտրովի դասընթացում: Բնական է, որ հանրակրթական դպրոցի սովորողների բարոյական արժեքների ձևավորումը պետք է սկսել հենց առաջին դասարանից: Այս դեպքում խնդրի լուծման հիմնական ճանապարհը հանգում է հանրակրթական առարկաների դասավանդման ընթացքում բարոյական արժեքների ձևավորմանը, ինչն ամրագրված է ՀՀ պետական և առարկայական չափորոշիչներով: Հարկ է նկատել, որ բարոյական արժեքների ձևավորման նման հնարավորությունը կազմում է հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկայի կրթական ներուժի կարևոր մասը, իսկ այդ ներուժի բացահայտումը, հանրակրթության մեջ դրա ներդրման իրականացումն այսօր կրթության առջև կանգնած առանցքային հիմնահարցերից մեկն է:

Հանրակրթական դպրոցի առարկայական բնագավառների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում «Մաթեմատիկան»: Այն մեծ նշանակություն ունի իր կիրառական նշանակությամբ, սովորողների մտածողության, հոգեկան այլ գործընթացների, աշխարհայացքի ձևավորման և այլ գործառույթներով: Միևնույն ժամանակ, նշված բնագավառի ուսումնական առարկաները, մայրենի լեզվի հետ միասին, դասավանդվում են հանրակրթական դպրոցի բոլոր դասարաններում և բարոյական արժեքների ձևավորման լայն հնարավորություն են ստեղծում: Հետևապես, մաթեմատիկայի դասավանդման միջոցով սովորողների բարոյական արժեքների ձևավորումը պետք է դիտել որպես դաստիարակության կարևորագույն խնդիր, ինչը կարևորվում է նաև մեթոդական գրականության մեջ:

Մաթեմատիկայի ուսուցումն ունի ինչպես բարոյական դրական (բարու, արդարության, արժանապատվության և այլն), այնպես էլ բացասական (անարդարության, նախանձի, մեծամտության, անհանդուրժողականության և այլն) արժեքների ձևավորման մեծ ներուժ: Հետևաբար, մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական դրական արժեքների ձևավորման և բացասական արժեքների արմատավորման կանխարգելման հիմնահարցը ստանում է առաձևակի կարևորություն:

Մյուս կողմից ներկա շրջանում հանրակրթական դպրոցների ուսուցիչների սովոր մասը իրենց մասնագիտական կրթությունը ստացել է ավտորիտար կրթական մոտեցումների պայմաններում և հեռու է հումանիստական կրթության ներկա պահանջների, մասնավորապես բարոյական արժեքների ձևավորման անհրաժեշտության գիտակցությունից: Այդ պատճառով մեզանում հաջողություն չեն ունենում մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված հատուկենտ փորձերը: Բացի այդ, ՀՀ մաթեմատիկայի ներկայիս ուսուցիչները

չունեն համապատասխան պատրաստվածություն՝ իրականացնելու բարոյական արժեքների ձևավորման աշխատանքներ: Խնդիրը դժվարանում է նաև նրանով, որ բացակայում են ինչպես համապատասխան ուսումնամեթոդական նյութեր, այնպես էլ մաթեմատիկայի դասի բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված մեթոդական մշակումներ: Հարկ է նշել, որ բարոյական արժեքների ձևավորման գործում մաթեմատիկայի կրթական ներուժի բացահայտմանն ուղղությամբ վերջին շրջանում կատարված աշխատանքները հիմնականում ունեն տեսական բնույթ և ուսուցչին նման արժեքների ձևավորման կոնկրետ հնարավորություններ չեն տալիս, և ինչպես այս, այնպես էլ մյուս արժեքների ձևավորմանն ուղղությամբ կոնկրետ գործնական ուղիների բացահայտումը և մեթոդական հանձնարարականների մշակումը նույնպես հանրակրթական դպրոցի առջև կանգնած արդիական կարևոր խնդիր է:

Այսպիսով, հրատապ է դառնում մի կողմից բարոյական արժեքների ձևավորմանն ուղղությամբ հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» բնագավառի ուսումնական առարկաների կրթական ներուժի բացահայտումը, դրանց բովանդակության մեջ բարոյական արժեքներին նվիրված նյութերի ներառումը կամ ավելացումը, և դրա ուսուցումը իրականացնող ուսուցչի պատրաստումը, մյուս կողմից արժեկողմնորոշիչ ուսուցմանն ուղղված ուսումնամեթոդական նյութերի պատրաստումը և ուսուցման համապատասխան մեթոդիկայի մշակումը:

Ասվածը բավարար է ապացուցելու համար ատենախոսության թեմայի արդիականությունը:

Խնդրի մշակվածության աստիճանը: Թեմային առնչվող գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողների բարոյական արժեքների ձևավորման վերաբերյալ Ռ.Փիթերսի, Լ.Նուցիի, Գ.Կոլիերի, Վ.Պիսարենկոյի, Մ.Յանովսկայայի, Ա.Ռյաբչևսկայայի, Ն.Բոլդիրևի, Ն.Շիխովցովայի և այլոց կողմից կատարված հետազոտությունները չեն վերաբերվում առանձին ուսումնական բնագավառների և դրանք հնարավոր չէ ներգրավել արժեքների ձևավորմանը հանրակրթական առանձին ուսումնական առարկաների, այդ թվում, մաթեմատիկայի ուսուցման ժամանակ: Այդպիսի ուսումնասիրություններ արված են Հ.Միքայելյանի աշխատանքներում, սակայն դրանք էլ ավելի շատ ունեն տեսական, քան գործնական բնույթ և նշանակություն: Վերջինիս համար հիմք կարող են հանդիսանալ մաթեմատիկայի հայկական դասագրքերում առկա բարոյական արժեքներին նվիրված նյութերը, որոնք էլ, սակայն, մեծ ծավալ չեն կազմում և մշակման, լրացման, համակարգման կարիք ունեն:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում հանրակրթական դպրոցի սովորողների բարոյական արժեքների ձևավորմանն արդյունավետ ուղիների մշակումն է:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը մաթեմատիկայի

ուսուցման գործընթացում հանրակրթական դպրոցի սովորողների բարոյական արժեքների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան մաթեմատիկայի ուսուցման միջոցով սովորողների արժեքային համակարգի բարոյական բաղադրիչի իրացման և արժեքների ձևավորման արդյունավետ մեթոդական համալիրն է:

Հետազոտության գիտական վարկածը:

Եթե՝

- բացահայտվեն բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ մաթեմատիկայի կրթական ներուժը և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման գործնական ուղիներ,
- մշակվի բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված մաթեմատիկական խնդիրների համակարգ,
- մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կիրառվեն բարոյական արժեքների ձևավորման արդյունավետ մոտեցումներ,

ապա՝

- հնարավորություն կստեղծվի պրակտիկորեն իրականացնել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման խնդիրը,
- կբարձրանան սովորողների բարոյական գիտակցությունը և բարոյական դրական վարքի դրսևորման լրացուցիչ հնարավորությունները,
- կմեծանա սովորողների արժեքային կողմնորոշումներում և արժեհամակարգերում բարոյական դրական բաղադրիչը,
- կկարևորվի հումանիստական արժեքները կրող մաթեմատիկայի ուսուցիչների դերը:

Հետազոտության հիմնական խնդիրները: Հետազոտության նպատակի իրագործման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել բարոյական արժեքների ձևավորման գործում մաթեմատիկայի կրթական ներուժի բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքները,
2. Վեր հանել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման հայրենական և միջազգային փորձը,
3. Նախանշել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական կոնկրետ արժեքների ձևավորմանը նպաստող ուղիներ,
4. Ստեղծել բարոյական արժեքների ձևավորմանը նվիրված մաթեմատիկական խնդիրների համակարգ,
5. Մշակել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման պրակտիկ մոտեցումներ:

Հետազոտության փուլերը: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են երեք փուլով:

Առաջին փուլում (2012-2014թթ.) իրականացվել է թեմայի վերաբերյալ գրականության ուսումնասիրություն, ՀՀ-ում տպագրված մաթեմատիկայի դասագրքերից և մաթեմատիկայի հին հայկական խնդրագրքերից ու դասագրքերից առանձնացվել են բարոյական արժեքների ձևավորմանը նպաստող խնդիրները և տեսական նյութերը: Որոշվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը և խնդիրները, հրատարակել ենք 3 հոդված:

Երկրորդ փուլում (2014-2015թթ.) շարունակվել են թեմայի վերաբերյալ հետազոտական աշխատանքները, բացահայտվել են հետազոտության հիմնախնդրի լուծմանն ուղղված հայրենական և միջազգային փորձը, առաջարկվել են բարոյական կոնկրետ արժեքների ձևավորմանը նպաստող ուղիներ և մշակվել են արդյունավետ մոտեցումներ: Այս փուլի ընթացքում հրատարակել ենք 5 հոդված:

Երրորդ փուլում (2015-2017թթ.) իրականացրել ենք մանկավարժական գիտափորձերը, կատարել արդյունքների վերլուծություն, դրանց մասին զեկուցել սեմինարներում և գիտաժողովներում, հստակեցրել ենք եզրակացությունը, ատենախոսությունը բերել ավարտուն տեսքի: Այս ընթացքում հրատարակել ենք 9 հոդված:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել բարոյական դաստիարակությանը վերաբերող փիլիսոփայության, բարոյագիտության, մանկավարժության հիմնական դրույթները, հումանիստական կրթության հայեցակարգերը, մաթեմատիկայի և բարոյական արժեքների փոխառնչություններին վերաբերող տեսությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել ենք հետևյալ մեթոդներից:

1. Տեսական վերլուծության մեթոդներ, որոնց միջոցով ուսումնասիրվել են թեմային առնչվող գրականությունը, վերլուծվել են նրանցում նախանշված ուղիները,
2. Էմպիրիկ հետազոտության մեթոդներ, որոնց օգնությամբ շարադրվել են ատենախոսության հիմնական դրույթները և իրականացվել գիտափորձեր,
3. Մաթեմատիկական-վիճակագրական մեթոդներ, որոնց օգնությամբ վերլուծվել են կատարված գիտափորձերի արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Վերլուծվել և խորացվել է բարոյական արժեքների ձևավորման գործում մաթեմատիկայի կրթական ներուժի բացահայտման ուղղությամբ համաաշխարհային և ներկայի ու անցյալի հայրենական

փորձը:

2. Նախանշվել են ուղիներ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական հիմնական արժեքների ձևավորումն իրականացնելու համար:
3. Կազմվել է մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված խնդիրների համակարգ:
4. Մշակվել են մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով բարոյական արժեքների ձևավորման արդյունավետ մոտեցումներ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտությունը խորացնում և ընդլայնում է բարոյական արժեքների ձևավորման գործում հանրակրթության «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի կրթական ներուժի բացահայտման խնդրի ուսումնասիրությունը, նախանշում է մաթեմատիկայի ուսուցման միջոցով հումանիստական կրթության իրականացման նոր ճանապարհ, ավելի ընկալելի է դարձնում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման հարցի էությունը: Այն կարող է նպաստել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում արժեքների ձևավորմանն ուղղված հետազոտական աշխատանքների իրականացմանը և հիմք հանդիսանալ հանրակրթության այլ ուսումնական բնագավառներում նմանատիպ հետազոտությունների կատարման համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել և կիրառվել հանրակրթական դպրոցի պրակտիկայում, մաթեմատիկայի ուսուցիչների աշխատանքային գործունեության ընթացքում, մաթեմատիկայի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համակարգում, ինչպես նաև հանրակրթական և բուհական դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության ստեղծման, դասերի պլանավորման, դասընթացների կազմակերպման ընթացքում:

Հետազոտության անցած փորձաքննությունը: Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային ավագ դպրոց վարժարանում, Էջմիածնի Ներսիսյան թիվ 6 հիմնական դպրոցում, Արտիմետ գյուղի միջնակարգ դպրոցում: Հետազոտության հիմնական դրույթները պարբերաբար զեկուցվել են ՀՀ-ի, ՌԴ-ի միջազգային, միջտարածաշրջանային և հանրապետական գիտաժողովներում, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի գիտամեթոդական սեմինարներում: Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են հրապարակված 17 հոդվածներում:

Հետազոտության հավաստիությունը: Հետազոտության հավաստիությունն ապահովել են ատենախոսության գիտական ապարատը, հիմնախնդրի վերաբերյալ առկա գրականության բազմակողմանի և համալիր

ուումնասիրությունը, հետազոտական աշխատանքների իրականացման համակարգվածությունը, առաջարկվող ուղիների փորձարարական ստուգումը, գիտափորձերի արդյունքների վերլուծությունը՝ մաթեմատիկական-վիճակագրական մեթոդների օգնությամբ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հնարավոր է համակարգված ձևով իրականացնել սովորողների բարոյական արժեքների ձևավորումը՝ հաշվի առնելով այդ ուղղությամբ մաթեմատիկայի կրթական ներուժը:
2. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական արժեքների ձևավորման գործընթացի արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել այս խնդրի շուրջ հայրենական և միջազգային լավագույն փորձի կիրառմամբ:
3. Բարոյական արժեքների ձևավորմանը նպաստող մաթեմատիկական խնդիրների մշակված համակարգը օգնում է ուսուցչին գործնականում առավել դյուրին և արդյունավետ իրականացնել սովորողների արժեքային համակարգի բարոյական բաղադրիչի ձևավորման գործընթացը, ինչպես նաև մեծացնում է սովորողների հետաքրքրությունը դասի նկատմամբ:
4. Հնարավոր է կիրառել մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման խնդրի արդյունավետ լուծման պրակտիկ մոտեցումներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից՝ յուրաքանչյուրը ենթազուլոխներով՝ ներկայացված կետերով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից (176 անուն): Ատենախոսությունում առկա են 9 աղյուսակ, 17 տրամազիր, ծավալը կազմում է 145 էջ: Ատենախոսությունում գետեղված են նաև 5 հավելված՝ 29 էջ ծավալով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման տեսական հիմունքները**», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ «**Բարոյական արժեքները դաստիարակության համակարգում**», ներառում է երեք բաժին: Առաջին բաժնում՝ «**Բարոյական արժեքները և դրանց դերը դաստիարակության համակարգում**», դիտարկվում է բարոյականության, բարոյական արժեքների դերը և ներկայացվածությունը տարբեր

հասարակարգերում, փիլիսոփայական ուղղություններում, մանկավարժության պատմության մեջ և դաստիարակության համակարգում:

Առաջին ենթագլխի երկրորդ բաժնում՝ **«Բարոյական արժեքների ձևավորման ժամանակակից մոտեցումները»**, հանգամանորեն ներկայացված է հանրակրթական դպրոցում բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ մի շարք երկրների (Մալայզիայի, Անգլիայի, Շոտլանդիայի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի, Հոնկոնգի) փորձը: Դիտարկված երկրներում հատուկ ուշադրություն է դարձվում բարոյական կրթությանը. այն ուսումնասիրվում է առանձին՝ բարոյագիտական բնույթի ուսումնական առարկայի շրջանակներում: Միևնույն ժամանակ բարոյական արժեքների ձևավորումը դառնում է ուսումնական այլ առարկաների կրթական կարևոր նպատակ: Հիմնահարցին անդրադառնում են նաև միջազգային տարբեր կառույցներ՝ Եվրոպական դպրոցներ, Random acts of kindness foundation (RAK), Ethika (Ethics and values education in schools and kindergartens), որոնք ամենատարբեր բնույթի օժանդակություն են ցույց տալիս կրթական հաստատություններին սովորողների բարոյական դաստիարակության և համակողմանի ու ներդաշնակ զարգացման իրականացման գործում:

Առաջին ենթագլխի երրորդ բաժնում՝ **«Բարոյական արժեքների ձևավորման խնդիրը հայ մանկավարժության մեջ»**, դիտարկվում է հայ իրականության մեջ բարոյական արժեքների ձևավորման խնդիրը՝ քրմապետական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Անդրադարձ է կատարվում այս ուղղությամբ հայ մանկավարժների, փիլիսոփաների, հոգևորական դասի աշխատություններին: Այստեղ դաստիարակության համակարգը աչքի է ընկնում ընդգծված մեթոդաբանությամբ, որտեղ առանձնանում են համոզման, անձնական օրինակի, խրախուսանքի, պատժի, ինչպես նաև բարոյական վարժությունների մեթոդները և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները՝ երեխաների նկատմամբ դաստիարակի սերը, լավատեսական վերաբերմունքը, պահանջկոտությունը, պահանջների միասնականությունը և դաստիարակի անձնավորությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը՝ **«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման հիմնահարցը»**, բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում՝ **«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները»**, ցույց է տրվում, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման խնդրի վերաբերյալ հանրակրթությունում առկա մոտեցումները ունեն ինչպես մանկավարժական, այնպես էլ հոգեբանական արմատներ: Ուսուցչական միջավայրում կա համոզմունք, որ մաթեմատիկայի դասաժամը

պետք է ծառայի միայն գիտելիքների փոխանցմանը: Ուսուցիչները մեծ մասամբ չեն պատկերացնում մաթեմատիկական կրթության հումանիստական գործառույթի էությունը և չեն կարևորում դրա իրականացման անհրաժեշտությունը, ինչին նպաստում է նաև բարոյականության և բարոյական արժեքների վերաբերյալ գիտելիքների պակասը, ավտորիտար համակարգի ավանդույթներով աշխատելու փորձը: Վերջին տեսակետից հատկանշական է, որ աշակերտներն ավելի շուտ են հարմարվում կրթական հումանիստական մոտեցումներին, մասնավորաբար բարոյական արժեքների ձևավորման պրակտիկային, քան ուսուցիչները:

Այս ենթագլխի երկրորդ բաժնում՝ **«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման փորձը»**, նախ ներկայացվում է բարոյական արժեքների ձևավորման այլ երկրների փորձը արդեն մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, ինչը, ի տարբերություն ուսումնական գործընթացում բարոյական արժեքների ձևավորման փորձի, աչքի չի ընկնում իր հարստությամբ: Այնուհետև անդրադարձ է կատարվում հայաստանյան պատմական փորձին: Մասնավորաբար դիտարկվում են Անանիա Շիրակացու և 19-րդ դարի հայ մանկավարժների այն աշխատանքները, որոնցում կարևորվում է մաթեմատիկական կրթության միջոցով բարոյական արժեքների ձևավորման խնդիրը: Այս բաժնի երկրորդ մասը նվիրված է մաթեմատիկական կրթության միջոցով բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ Հայաստանի երրորդ Հանրապետության փորձին, որտեղ խնդիրը ներկայացված է պետական և առարկայական չափորոշիչների մակարդակով: Դիտարկվում են նաև առաջադրված չափորոշիչային խնդիրների լուծման և, ընդհանրապես, բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ անկախության շրջանում ՀՀ-ում գործող մաթեմատիկայի դասագրքերի հնարավորությունները, ստեղծված գիտամեթոդական և ուսումնամեթոդական գրականության արդյունքները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման պրակտիկան»**, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ **«Բարոյական հիմնական արժեքների ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում»**, բաղկացած է երկու բաժնից: Այդ ենթագլխի առաջին բաժինը՝ **«Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման ընդհանրական խնդիրը»**, միտված է մաթեմատիկական կրթության հումանիստական ուղղվածության, նրա հումանիզացիայի և հումանիտարիզացիայի գործառույթների իրականացման խնդիրներին, բարոյական արժեքների համատեքստում մաթեմատիկայի հումանիտար ներուժի բացահայտմանը: Բարու և սիրո, արժանապատվության և հարգանքի, խղճի և ամոթի, կյանքի իմաստի և նպատակի, արդարության, հանդուրժողականության, բարոյական հիմնական արժեքների էության և

մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրանց ձևավորման հնարավորությունների բացահայտումը լավագույնս հաստատում է կրթության հումանիզացիայի հիմնական դրույթներից մեկը. «Կրթված է այն մարդը, որի համար գիտելիքը և բարոյականությունը կազմում են մեկ միասնական ամբողջություն»: (Գ. Ի. Սարանցև)

Երկրորդ բաժնի՝ **«Հայրենասիրության և երջանկության արժեքների ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում»**, առաջին մասում դիտարկվում է հայրենասիրության բարոյական արժեքը, մաթեմատիկայի ուսուցման գործընթացում նրա ձևավորման ուղղությամբ որոշ երկրների (ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի) փորձը: Երկրորդ մասում ներկայացված են երջանկության բարոյական արժեքի էությունը, մաթեմատիկական կրթության դերը և հնարավորությունները նրա ձևավորման գործում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մաթեմատիկայի ուսուցիչները հիմնականում չեն պատկերացնում և հետևաբար նաև չեն օգտագործում նշված արժեքների ձևավորման ուղղությամբ մաթեմատիկայի ներուժը: Բնականաբար, այս մոտեցումը շրջանցում է նաև աշակերտական հանրությունը, այնինչ այն կարող էր ծառայել որպես մաթեմատիկայի ուսուցման գործընթացի մոտիվացման լուրջ գործոն: Միևնույն ժամանակ, հայրենասիրությունը և երջանկությունը բարձրագույն հոգևոր արժեքներ են, որոնց դիտարկումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ներառվում է կրթության հումանիտարիզացիայի նպատակների շարքում՝ որպես անձի հոգևոր աշխարհի ձևավորման բաղկացուցիչ մաս:

Այս գլխի երկրորդ ենթաբաժնի՝ **«Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկական խնդիրների ուսուցման գործընթացում»**, բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժնում՝ **«Բարոյական արժեքներին նվիրված մաթեմատիկական խնդիրները անցյալի հայկական դասագրքերում»**, ուսումնասիրվում է անցյալի հայկական ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր դասագրքերում ամփոփված խնդիրների հարուստ գինանոցը, որտեղից վեր է հանվում և ըստ առանձին ձևավորվելիք արժեքների և հանրակրթությունում օգտագործվելու հնարավորությունների դասակարգվում է բարոյական արժեքներին նվիրված հարուստ նյութը: Կատարված ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ մաթեմատիկայի վաղ անցյալի հայկական ձեռագիր հիմնական աշխատությունները՝ Շիրակացու խնդրագիրքը և խրախճանականները, բացի ուսումնականից, ունեցել են նաև դաստիարակչական (արժեքների ձևավորման) նպատակ: Այս մոտեցումը շարունակվել է նաև մաթեմատիկայի՝ հիմնականում թվաբանության և հանրահաշվի հայկական տպագիր դասագրքերում, որոնք բուռն զարգացում ունեցան հատկապես 19-րդ դարում:

Երկրորդ բաժնում՝ **«Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկայի ՀՀ դասագրքերի խնդիրների համակարգում»**, վերլուծվում և

ներկայացվում են ՀՀ մաթեմատիկայի դասագրքերից, մաթեմատիկական տարբեր մրցույթներից առանձնացված այնպիսի խնդիրներ, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել բարոյական դաստիարակության, մասնավորաբար՝ բարոյական արժեքների ձևավորման գործառույթը: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի հանրահաշվի 7-9-րդ դասարանների հայկական դասագրքերը, որոնցում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել դասընթացի կիրառական միջավայրի ընտրությանը՝ այն ամբողջովին խարսխելով առաջին հերթին ազգային, ապա համամարդկային արժեքների հիման վրա: Դրանցում տեղ են գտել նաև կոնկրետ բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված բազմապիսի նյութեր և խնդիրներ:

Երրորդ բաժնում՝ **«Բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված խնդիրների միասնական համակարգը և ուսուցման պրակտիկան»**, ներկայացվում են մեր կողմից մշակված խնդիրներ՝ դասակարգված ըստ դասարանների, մաթեմատիկական թեմաների և ձևավորվող բարոյական արժեքների, ներկայացվում է խնդիրների միջոցով արժեքների ձևավորման պրակտիկ օրինակ:

Քննարկված են նաև մաթեմատիկայի ուսուցման արժեկողմնորոշիչ և ոչ արժեկողմնորոշիչ մոտեցումները (արևմտյան գրականության մեջ գործածվում է նաև արժեկողմնորոշիչ մեթոդ- VOM եզրույթը): Ներկայացվում է արժեկողմնորոշիչ ուսուցման էությունը, նրա դերը ուսուցման արժեքային գործառույթի իրականացման հարցում: Մասնավորաբար այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու կրթության հումանիտարիզացիայի գործառույթի նկատմամբ Գ. Վ. Դորոֆեևի հանրահայտ մոտեցումն այն մասին, որ «մաթեմատիկայի դասի նպատակը ոչ այնքան մաթեմատիկա սովորեցնելն է, որքան մաթեմատիկայի միջոցով կրթություն իրականացնելը», ինչը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացի մեջ ներգրավել նաև մաթեմատիկական գիտելիքներով չփայլող աշակերտներին:

Այս ենթագլխում կատարված աշխատանքների արդյունքում ստեղծվել է մաթեմատիկական խնդիրների միասնական համակարգ, որում տեղ են գտել ինչպես անցյալի ու ներկայի հայկական դասագրքերի, այնպես էլ մեր կողմից կազմված խնդիրները: Դրանք դասակարգվել են ըստ բարոյական արժեքների, դասավանդվող թեմաների և չնայած ստեղծման ժամանակային և տարածական տարբերություններին՝ միավորված են միևնույն խնդրի իրականացման շուրջ՝ ուղղված սովորողների բարոյական արժեքների ձևավորմանը և զարգացմանը:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Մանկավարժական գիտափորձի դրվածքը և նրա արդյունքները»**, ներկայացվում է մեր կողմից իրականացված գիտափորձը իր երեք՝ հաստատող, որոնողական և ուսուցողական փուլերով: Հանգամանորեն ներկայացվում են

գիտափորձի արդյունքները, կատարվում է անհրաժեշտ վերլուծություն, տրվում են համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:

Գիտափորձի հաստատող փուլի արդյունքները ցույց տվեցին, որ հանրակրթական դպրոցներում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների դրվածքը ունի շատ ցածր մակարդակ:

Գիտափորձի որոնողական փուլի ընթացքում պարզ դարձավ, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ առկա են ոչ մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք էլ հիմնականում ունեն տեսական բնույթ և անմիջականորեն չեն ներառվում ուսումնական գործընթացում:

Ուսուցողական փուլում իրականացրել ենք երկու գիտափորձ: Առաջին գիտափորձի ժամանակ նպատակ էինք դրել ստուգելու մեր կողմից մշակված ուսումնական նյութերի արդյունավետությունը բարոյական արժեքների ձևավորման գործում, իսկ երկրորդ գիտափորձի ժամանակ պարզեցինք արժեկողմնորոշիչ մոտեցման արդյունավետությունը: Այս երկու գիտափորձերում օգտագործվել է Լայկերտի սանդղակը, իսկ արդյունքները վերլուծվել և ամփոփվել են վիճակագրական տարբեր միջոցներով: Արդյունքների վերլուծությունից կատարված եզրակացությունների հավաստիությունը մեծացնելու համար հաշվարկները կատարեցինք նաև մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով, մասնավորաբար կիրառվեց χ^2 հայտանիշը: Արդյունքում պարզ դարձավ, որ մեր կողմից մշակված խնդիրների համակարգը արդյունավետ է մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման համար, իսկ առավել բարձր արդյունավետություն է ապահովում բարոյական արժեքներ ներառող նյութի արժեկողմնորոշիչ ուսուցումը:

Այս ամենից բացի ստուգել ենք նաև աշակերտների հետաքրքրությունը Վ.Չերեպանովի առաջարկած մեթոդիկայի օգնությամբ, որի հիմքում դրված է հետաքրքրության ցուցանիշի որոշման հետևյալ բանաձևը.

$$\llcorner \approx \frac{m_1 + 2m_2 + \dots + km_k}{km}, \quad (*)$$

որտեղ m -ը գիտափորձի մասնակիցների թիվն է, իսկ k -ն՝ հետաքրքրության մակարդակների սանդղակի աստիճանների թիվը: Բերված (*) բանաձևը մեր գիտափորձերի դեպքում ունի հետևյալ տեսքը.

$$\llcorner \approx \frac{m_1 + 2m_2 + 3m_3}{3m}, \quad (**)$$

որտեղ՝ $m_1 + m_2 + m_3 \leq m$, m -ը գիտափորձի մասնակիցների թիվն է, m_1 -ը՝ այն մասնակիցների թիվը, որոնց համար ուսուցանվող նյութը անհետաքրքիր է, m_2 -ը՝ որոնց համար հետաքրքիր է, m_3 -ը՝ որոնց համար շատ հետաքրքիր է:

Համադրելով այս հարցին երկու գիտափորձերից ստացված պատասխանները և արդյունքները հաշվարկելով (***) բանաձևով, ստացանք, որ փորձարարական խմբերում հետաքրքրության ցուցանիշը կազմում է մոտավորապես 0.85, որը, համաձայն Վ.Չերեպանովի սանդղակի, համապատասխանում է «շատ հետաքրքիր է» ցուցանիշին: Իսկ ստուգողական խմբերում հետաքրքրության ցուցանիշը կազմել է մոտավորապես 0.68, որը համապատասխանում է «հետաքրքիր է» ցուցանիշին: Արդյունքում ստացվում է, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորմանը նպաստող մաթեմատիկական նյութերի ներառումը և ուսուցման արդյունավետ ուղիների կիրառումը նպաստում է մաթեմատիկայի դասի նկատմամբ սովորողների հետաքրքրության ցուցանիշի զգալի բարձրացմանը:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության շուրջ իրականացված տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Մաթեմատիկական ունի բարոյական արժեքների ձևավորման մեծ ներուժ: Այդ ներուժի բացահայտումը և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրա կիրառումը մեծապես նպաստում են ինչպես սովորողների բարոյական դաստիարակության հետ կապված խնդիրների լուծմանը, այնպես էլ ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ուսումնական առարկայի նկատմամբ հետաքրքրությունների մեծացմանը:

2. Հանրակրթությունում սովորողների բարոյական արժեքների ձևավորման միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն հիմնականում իրականացվում է բարոյագիտության վերաբերյալ առանձին ուսումնական առարկաների միջոցով: Շատ չեն մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված նյութերը: Դրանք հիմնականում հանգում են դասագրքերում ընդգրկված տեքստային խնդիրներում բարոյական այս կամ այն արժեքի ներառման:

3. Բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ մաթեմատիկայի ներուժի կիրառման խնդիրը եղել է միջնադարյան հայ հասարակական մտքի ուշադրության առարկա, ինչն ամրապնդվել է նոր ժամանակներում ստեղծված մաթեմատիկական հայկական դասագրքերի նյութերում: Անկախության շրջանում խնդիրը լայնորեն արժարժվել է ինչպես տեսական հետազոտություններում, այնպես էլ ստեղծված առանձին դասագրքերում: Հայրենական այս փորձի օգտագործումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հանրակրթական դպրոցի սովորողների բարոյական արժեքների ձևավորման արդյունավետ իրականացմանը նպաստող կարևոր գործոն է:

4. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների բարոյական դաստիարակության և բարոյական արժեքների ձևավորման հնարավորությունները կապված են ինչպես բուն մաթեմատիկական նյութի, այնպես էլ նրա կիրառական միջավայրի հետ: Այդ հնարավորությունների դյուրին և արդյունավետ իրականացումը կարող է էապես բարելավվել մաթեմատիկայի դասընթացում բարոյական արժեքներին նվիրված տեսական նյութերի, պատմական տեղեկությունների ընդգրկման և գործնական, հետազոտական, խմբային աշխատանքների կազմակերպման շնորհիվ:

5. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման լայն հնարավորություններ են ընձեռում տեքստային խնդիրների համակարգը, որում հաջողությամբ կարելի է ընդգրկել անցյալի ու ներկայի հայ հեղինակների խնդիրները, կազմել նորերը:

6. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցման նկատմամբ ուսուցչի ցուցաբերած մոտեցումներից: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բարոյական արժեքների ձևավորման առավել բարձր արդյունավետություն է ապահովում բարոյական արժեքներ ներառող նյութի արժեկողմնորոշիչ ուսուցումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ.

1. Ենոքյան Ա. Վ., Բարոյ արժեքի ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, «Մաթեմատիկական դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, թիվ 6(93), Երևան, 2013 թ., էջ 47-51:

2. Ենոքյան Ա. Վ., Հայրենասիրության արժեքի ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, «Մաթեմատիկական կրթություն 2» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014 թ., էջ 31-36:

3. Ենոքյան Ա. Վ., Մաթեմատիկական կրթությունը և բարոյական դաստիարակությունը Հայաստանում, նախաքրիստոնեական ժամանակաշրջանից մինչև 19-րդ դարը, «Արժեքների ձևավորումը և մաթեմատիկայի կրթական ներուժը» N1 գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևան, 2014թ. էջ 141-150:

4. Енокян А. В., Формирование моральных ценностей посредством обучения математическим задачам в армянской образовательной среде VII–XIX вв., Сборник статей VI Межрегиональной научно-практической конференции учителей, г. Пенза, 2015 г., С. 122-125.

5. Ենոքյան Ա. Վ., Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկական խնդիրների ուսուցմամբ հայկական կրթական միջավայրում (VII-XIX դդ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2015թ. N1(643) հունվար-ապրիլ, էջ 382-387:

6. Ենոքյան Ա. Վ., Սրեյան Մ. Ե., Մաթեմատիկական կրթությունը Արևմտյան Հայաստանում առաջին աշխարհամարտից առաջ, «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, թիվ 1(99), Երևան, 2015 թ., էջ 8-20:

7. Ենոքյան Ա. Վ., Հարությունյան Գ. Հ., Երջանկությունը և մաթեմատիկական կրթությունը, «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, թիվ 2(100), Երևան, 2015 թ., էջ 13-22:

8. Ենոքյան Ա. Վ., Հանդուրժողականությունը և մաթեմատիկական կրթությունը, «Մաթեմատիկական կրթություն 3» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015 թ., էջ 47-51:

9. Енокян А. В., Патриотизм и математическое образование, Сборник статей VII Межрегиональной научно-практической конференции учителей, г. Пенза, 2016 г., С. 44-47.

10. Мкртчян А. Т., Енокян А. В., Формирование моральных ценностей в процессе обучения элементам логики, Сборник статей международной научно-практической конференции “Современные тенденции естественно-математического образования: школа-вуз” г. Соликамск, 2016 г., ч.1, С. 52-56.

11. Ենոքյան Ա. Վ., Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում. փորձարարական աշխատանքներ, «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, N3 (106), Երևան, 2016 թ., էջ 16-26:

12. Ենոքյան Ա. Վ., Հանդուրժողականության ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, N4 (107), Երևան, 2016 թ., էջ 19-27:

13. Ենոքյան Ա. Վ., Բարոյական արժեքները մաթեմատիկայի հին հայկական խնդրագրքերում, «Մաթեմատիկական կրթություն 4» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2016 թ. էջ 32-36:

14. Միրայելյան Հ. Ս., Ենոքյան Ա. Վ., Բարոյական արժեքների ձևավորումը հումանիտար կրթության պայմաններում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2016թ. N3(648) սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 276-283:

15. Енокян А. В., Проблема нравственного воспитания посредством математики в истории Армянской педагогики, Physical and mathematical education, issue 4(10), г. Суми, 2016 г., С. 13-16.

16. Енокян А. В., Формирование моральных ценностей школьников посредством обучения математическим задачам, Сборник статей XIII Международной научно-практической конференции «АРТЕМ ОВСКИЕ ЧТЕНИЯ», г. Пенза, 2017г., С. 121-124.

17. Միրայելյան Հ. Ս., Ենոքյան Ա. Վ., Հայաստան և Հոնկոնգ-հանրակրթական զուգահեռներ. բարոյական արժեքների ձևավորումը, «Մաթեմատիկական կրթություն 5» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2017 թ., էջ 131-135:

ЕНОКЯН АНАИТ ВАРДАНОВНА

ФОРМИРОВАНИЕ НРАВСТВЕННЫХ ЦЕННОСТЕЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ МАТЕМАТИКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – "Методика преподавания и воспитания" (математика).

Защита диссертации состоится 25-го сентября 2019 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, пр. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Общеобразовательная школа является важнейшим звеном нравственного воспитания учащихся, формирования нравственных ценностей. Основное средство решения этой задачи – школьные учебные дисциплины, их преподавание. Математика является одним из основных учебных дисциплин общеобразовательной школы и тесно связана с духовным миром человека и поэтому может успешно решать поставленную задачу. Поэтому выявление образовательного потенциала математики по формированию нравственных ценностей необходимо рассматривать в качестве важнейшей задачи воспитания, что подчеркивается и в методической литературе и важно в контексте гуманистических тенденций математического образования. С другой стороны, большая часть сегодняшних учителей математики РА не имеет соответствующей подготовки для выполнения работ по формированию нравственных ценностей. Задача усложняется также тем, что отсутствуют как соответствующие учебно-методические материалы, так и методические разработки по формированию нравственных ценностей на уроке математики. Выявление конкретных практических путей для формирования тех или иных нравственных ценностей, разработка методических рекомендаций - важная, актуальная проблема, стоящая перед общеобразовательной школой.

Таким образом, с одной стороны, необходимо выявление образовательного потенциала учебных предметов области «Математика» общеобразовательной школы в направлении формирования нравственных ценностей, включение или добавление в их содержание материалов, посвященных нравственным ценностям и подготовке учителя, осуществляющего его преподавание, а с другой стороны, создание учебно-методических материалов, направленных на ценностно-ориентированное обучение и разработка соответственной методики обучения.

Цель исследования. Разработка эффективных путей формирования нравственных ценностей у учащихся общеобразовательной школы в процессе преподавания математики.

Основные задачи исследования.

1. изучить работы, выполненные по выявлению образовательного потенциала математики в формировании нравственных ценностей,
2. выявить отечественный и зарубежный опыт формирования нравственных ценностей в процессе обучения математике,

3. указать пути, способствующие формированию конкретных нравственных ценностей учащихся в процессе обучения математике,
4. создать систему математических задач, посвященных формированию нравственных ценностей,
5. разработать практические подходы формирования нравственных ценностей в процессе обучения математике.

Научная новизна исследования.

1. Проанализирован и углублен прошлый и настоящий отечественный и зарубежный опыт в направлении выявления образовательного потенциала математики в области формирования нравственных ценностей.
2. Указаны пути для осуществления формирования основных нравственных ценностей учащихся в процессе обучения математике.
3. Составлена система задач, направленных на формирование нравственных ценностей учащихся в процессе обучения математике.
4. Разработаны эффективные подходы формирования нравственных ценностей в процессе обучения математике.

Теоретическое значение исследования. Исследование углубляет и расширяет изучение задачи выявления образовательного потенциала учебной области «Математика» общеобразовательной школы в формировании нравственных ценностей, указывает новый путь осуществления гуманистического образования посредством обучения математике, делает более понятной сущность вопроса формирования нравственных ценностей в процессе обучения математике. Оно может способствовать осуществлению исследований, направленных на формирование иных ценностей в процессе обучения математике и послужить основой для выполнения подобных исследований в других отраслях общего образования.

Практическое значение исследования. Результаты исследования могут быть применены в практике общеобразовательной школы, во время рабочей деятельности учителей, в системе подготовки и переподготовки учителей математики, а также во время создания учебно-методической литературы, общеобразовательных и вузовских учебников, планирования уроков, организации курсов.

Апробация результатов исследования. Апробация исследования проводилась на кафедре математики и методики ее преподавания АГПУ им. Х.Абовяна, в базовой высшей школе-колледже АГПУ им. Х.Абовяна, в основной школе им. Нерсисяна №6 Вагаршапата, в средней школе села Артимет (область Армавир). Основные положения исследования периодически докладывались на международных, межрегиональных и республиканских научных конференциях РА, РФ, на научно-методических семинарах кафедры математики и методики ее преподавания.

Структура исследования. Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка использованной литературы (176 наименований). В работе содержатся 9 таблиц, 17 диаграмм, общий объем составляет 145 компьютерных страниц. В диссертацию также включены 5 приложений – объемом 29 страниц. Основные результаты диссертации представлены в 17 опубликованных статьях.

YENOKYAN ANAHIT VARDAN

FORMATION OF MORAL VALUES IN THE TEACHING PROCESS OF MATHEMATICS

Dissertation for the scientific degree of Candidate of Pedagogical Sciences in specialty 13.00.02 – Methods of Teaching and Educating" (Mathematics).

The defense of the dissertation will take place on 25 September, 2019 at 12⁰⁰ at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC (Supreme Certifying Committee) at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 17 Tigran Mets ave., 0010, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. Comprehensive school is the most important link in the moral education of students, the formation of moral values. The main means of solving this problem are the school academic disciplines, their teaching. Mathematics is one of the main academic disciplines of comprehensive schools and is closely connected with the spiritual world of man, and therefore can successfully solve this task. Therefore, the identification of the educational potential of mathematics in the formation of moral values should be considered as one of the most important task of education, which is emphasized in the methodological literature and important in the context of the humanistic tendencies of mathematical education. On the other hand, most of today's teachers of mathematics in RA don't have the appropriate training to carry out work on the formation of moral values. The task is also complicated by the fact that there are no relevant teaching materials and methodological developments in the formation of moral values in a mathematics lesson. Identification of specific practical ways for the formation of certain moral values, the development of guidelines is also the most important, urgent problem facing the secondary school.

Thus, on the one hand, it becomes urgent to identify the educational potential of school subjects in the Mathematics field of a general education school towards the formation of moral values, including or adding to their content materials on moral values and the preparation of the teacher teaching it, and on the other hand, the preparation of teaching materials aimed at value-oriented training and the development of appropriate teaching methods.

The aim of the research is the development of effective ways of forming moral values in secondary school students in the teaching process of Mathematics.

The objectives of the research are

1. To study the works performed in the direction of identifying the educational potential of mathematics in the formation of moral values,
2. to identify domestic and international experience in the formation of moral values in the teaching process of Mathematics,
3. identify ways that contribute to the formation of specific moral values of students in the teaching process of Mathematics,
4. create a system of mathematical problems devoted to the formation of moral values,

5. develop practical approaches to the formation of moral values in the teaching process of Mathematics.

The scientific novelty of the research.

1. The international and past also present national experience in the direction of identifying the educational potential of Mathematics in the formation of moral values is analyzed and deepened.

2. The ways for the formation of the basic moral values of students in the teaching process of Mathematics are indicated.

3. A set of tasks aimed at forming the moral values of students in the teaching process of Mathematics has been drawn up.

4. The effective approaches to the formation of moral values through the teaching process of Mathematics are developed.

The theoretical value of the research.

The present research deepens and expands the study of the task of identifying the educational potential of the comprehensive course of Mathematics in the formation of moral values, points out a new way of implementing humanistic education through teaching mathematics, makes more clear the essence of the issue of moral values in the teaching process of mathematics. It can contribute to the implementation of research aimed at the formation of values in the teaching process of mathematics and serve as a basis for carrying out similar studies in other branches of general education.

The practical significance of the research.

The results of the research can be included and applied in the practice of secondary schools, during the working activities of teachers, in the system of training and retraining of teachers of mathematics, as well as during the creation of educational and methodological literature, comprehensive and university textbooks, lesson planning, organization of courses.

Approbation of the research.

Approbation of the research was carried out at the Department of Mathematics and its Teaching Methods at ASPU after Kh.Abovyan, in the higher school-college of ASPU after Kh.Abovyan, in the basic school of Nersisyan N6 in Vagharshapat, in the secondary school of Artimet village (Armavir Province). The main provisions of the research were periodically reported at international, interregional and national scientific conferences of the Republic of Armenia, the Russian Federation, at the scientific and methodological seminars of the Department of Mathematics and its teaching methods.

The structure of the research.

The thesis consists of content, introduction, two chapters: each of the sections, conclusion and bibliography (176 titles). There are 9 tables, 17 graphs in the thesis, the total volume is 145 computer pages. The thesis also includes 5 appendices - the volume of 29 pages. The main results of the present thesis are reflected in 17 published articles.

